Հովհաննես Թումանյան

Օ՛, լո՛ւռ կաց, ընկե՛ր, այդ ինչ ես երգում...

Օ՛, լո՛ւռ կաց, ընկեր. այդ ի՞նչ ես երգում.
Ինչո՞ւ ես խաղաղ հոգիս փոթորկում
Ուրախ օրերի սիրելի երգով
Եվ սիրտս վառում անցյալի կրակով...

Քո ձայների հետ վաղուց հեռացած
Մի ուրիշ պատկեր մտքումս երևաց.
Ահա, կենդանի կանգնեց առաջիս,
Եվ ահա՛, դարձյալ կարոտ ականջիս
Հնչում է նորա ձայնը սրտալի,

Որպես երբեմն, երբ սիրված էի:
Եվ մտքումս, ահա, լուսավորվեցան
Հին ցնորքներս, անցքեր զանազան,
Գծերը հոգուս ծանոթ դեմքերի,
Տեսարանները հայրենի երկրի,

Այն օրհնյալ երկրի, ուր մի ժամանակ
Վայելում էի լիուլի հրճվանք...
Բայց զրկված եմ ես այժմ բոլորից.
Դու հիշեցնում ես կորուստս նորից
Երջանկությունս մռայլ վիճակում

Եվ այդպես անգութ սիրտս կտրատում...
Ո՛հ, ներում եմ քեզ, չեմ հանդիմանում.
Չըգիտես, հոգիս, թե ի՛նչ ես անում.
Սակայն մի՛ երգիր այդ երգը ինձ մոտ.
Թո՛ղ, երգիր ուրիշ մի երգ անծանոթ:

1892